## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2020 թվականի N 1300

## ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Արթուր Հարությունյան Սուրենի ԱՁ-ի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ Արթուր Հարությունյան Սուրենի ԱՁ-ն 2020 թվականին իրականացրել է առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հունիսի 10-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հունիսի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել (հիմք՝ 13.06.2020թ. փոստ. անդորրագիր) և չի ներկայացել Արթուր Հարությունյան Սուրենի ԱՁ-ն:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 16916-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 16916-րդ հոդվածի 5-րդ մասով, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Արթուր Հարությունյան Սուրենի անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել Արթուր Հարությունյան Սուրենի ԱՁ-ին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3.Առաջարկել Արթուր Հարությունյան Սուրենի ԱՁ-ին մեկշաբաթյա ժամկետում դիմել Վանաձոր համայնքի ղեկավարին ստանալու տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու 2020 թվականի թույլտվությունը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հուլիսի 2020 թվականի N 1301

## «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ «ԿԱՌԿ-ՕԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ «ԿԱՌԿ-ՕԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2020 թվականին իրականացրել է առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հունիսի 10-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հունիսի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել (հիմք՝ 13.06.2020թ. փոստ. անդորրագիր) և չի ներկայացել «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կարեն Մալխասյանը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժինը ներկայացրել է «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար նախատեսված՝ 60 000 ՀՀ դրամ տեղական տուրքի վճարման Վանաձոր համայնքի բյուջեի մուտքերից քաղվածք:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 16916-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 16916-րդ հոդվածի 5-րդ մասով, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1. «ԿԱՌԿ-ՕԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել «ԿԱՌԿ-ՕԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1302

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄԻ 47Գ ՓՈՂՈՑ, (ՀՈՂԱՄԱՍ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՀՐԱՄ ՌՈՒԴԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Ռուդիկի Առաքելյանի լիազորված անձ Ռուդիկ Ռուբենի Առաքելյանի դիմումը, 16.06.2020թ. թիվ 23 ԱՎ 0419406 (նոտարական ակտի կոդ: 775-20200625-64-4595822) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19012012-06-0017 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նիզամի 47գ փողոց, (հողամաս) հասցեում գտնվող Վահրամ Ռուդիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նիզամի փողոց, թիվ 47-3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1303

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2-11/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈԲԵՐՏ ԳԵՎՈՐԳԻ ԶԱԽԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Գևորգի Զախարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24032020-06-0045 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 2-11/11 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.75քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.83քմ) ավտոտնակը 42080 (քառասուներկու հազար ութսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 18.0քմ մակերեսով հողամասը 34460 (երեսունչորս հազար չորս հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռոբերտ Գևորգի Զախարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռոբերտ Զախարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1304

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 34 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերգինե Մարատի Մարգարյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 34 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 24.12քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.42քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.13քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 34 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 34-21/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1305

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԻՎ 47/12-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀիմք ընդունելով Սուրեն Հարությունի Ղազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17062020-06-0047 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների թիվ 47/12-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.52քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.7քմ) ավտոտնակը 34890 (երեսունչորս հազար ութ հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 47.8քմ մակերեսով հողամասը 91490 (իննսունմեկ հազար չորս հարյուր իննսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուրեն Հարությունի Ղազարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուրեն Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1306

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 37/36Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջեմֆիրա Պետրոսի Գրիգորյանի դիմումը, 06.08.2019թ. սեփականության իրավունքի թիվ 5149 (նոտարական ակտի կոդ: 763-20190805-84-4069619) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5150 (նոտարական ակտի կոդ: 763-20190805-84-4069617) վկայագրերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1862263 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Լազյան փող թիվ 37/36գ հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 37/36-3 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1307

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 11-20/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՍՈՒՆ ՀՈՎԻԿԻ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սասուն Հովիկի Խաչիկյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052020-06-0031 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղամաս թիվ 11-20/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.3քմ) ավտոտնակը 46620 (քառասունվեց հազար վեց հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 29.6քմ մակերեսով հողամասը 87030 (ութսունյոթ հազար երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սասուն Հովիկի Խաչիկյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սասուն Խաչիկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1308

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԻՎ 8/3-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՉԱԳԱՆ ԵՐՋԱՆԻԿԻ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչագան Երջանիկի Բրուտյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09062020-06-0031 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների թիվ 8/3-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.78քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.8քմ) ավտոտնակը 37030 (երեսունյոթ հազար երեսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 140.0քմ մակերեսով հողամասը 267960 (երկու հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վաչագան Երջանիկի Բրուտյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վաչագան Բրուտյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1309

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 30 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Նիկոլայի Խաչատրյանի (ծնված՝ 01.08.1964թ.) լիազորված անձ Մարինե Ռաֆիկի Դավթյանի (ծնված՝ 04.12.1961թ.) դիմումը, 11.08.2018թ տրված թիվ 3290 (նոտարական ակտի կոդ 763-20180811-79-2866807) լիազորագիրը, 10.06.2020թ. տրված թիվ 1898 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20200610-88-4578859), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.04.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-64/20 Ի եզրակացությունը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծն և հաշվի առնելով, որ Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոցի թիվ 30 հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.50քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1983թ.:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Արմեն Նիկոլայի Խաչատրյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոցի թիվ 30 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.50քմ մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Փոխել Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոցի թիվ 30 հասցեում գտնվող 399.50քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակելի կառուցապատման հողերի:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ամառանոցային 1-ին փողոց, թիվ 30 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1310

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՄԱՆՅԻՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Թամանցիների փողոցի արևելյան մասում գտնվող 0.00122հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի, թիվ 64-25/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1311

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԱԾԽԱՀԱՏՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ 18 ՇԵՆՔ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐՏՈՒՆ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտուն Կորյունի Սիմոնյանի լիազորված անձ Ջհանգիր Գարիկի Դավթյանի դիմումը, 03.06.2020թ. թիվ 50 ԱԲ 4445162 (նոտարական ակտի կոդ: 763-20200526-2-4562752) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17062020-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Վանաձոր քաղաքի Տարոն-4 Ածխահատների թաղամաս 18 շենքի 5 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, Բելառուսների թիվ 18 շենք, 5 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1312

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂ ԹԻՎ 8/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇՈՒՐԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուրիկ Արմենակի Ղարագյոզյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1900034 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից տրված թիվ ՄՏ-12062020-06-0217 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-2, Վերածննդի փող թիվ 8/6 հասցեում գտնվող Շուրիկ Արմենակի Ղարագյոզյանին սեփականության իրավունքով պատկանող 0.035հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, Վերածննդի փողոց, թիվ 8/6 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1313

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂ ԹԻՎ 15/18Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Անուշավանի Խումարյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1854737 վկայականը, 17.06.2020թ. անշարժ գույքի (ավտոտնակի) առքուվաճառքի թիվ 1050 (նոտարական ակտի կոդ: 775-20200617-2-4586249)պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Բաթումի փող թիվ 15/18գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բաթումի փողոց, թիվ 15/18-2/4 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1314

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 77/9-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՇՈՏ ՆԱՐԻՆԲԵԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Նարինբեկի Ղազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14052020-06-0041 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի ա), գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս թիվ 77/9-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 37,36քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները՝ 30,58քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.08քմ) նկուղը 155960 (հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր վաթսուն) դրամով, 6,78քմ մակերեսով պարիսպը 23060 (քսաներեք հազար վաթսուն) դրամով և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 437,77քմ մակերեսով հողամասը 837900 (ութ հարյուր երեսունյոթ հազար ինը հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Աշոտ Նարինբեկի Ղազարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աշոտ Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել շինությունների և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1315

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂ ԹԻՎ 22Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՀԵՐ ԴԱՎԹԻ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մհեր Դավթի Ներկարարյանի լիազորված անձ Գերասիմ Գեղամի Անդրեասյանի դիմումը, լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1947234 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից տրված թիվ ՄՏ-08062020-06-0371 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փող թիվ 22ա հասցեում գտնվող Մհեր Դավթի Ներկարարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ազատամարտիկների փողոց, թիվ 22-1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1316

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ ԺՈՐԱՅԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ժորայի Սարուխանյանի լիազորված անձ Արտյոմ Մարտիկի Մամյանի դիմումը, 26.08.2019թ. թիվ 5832 (նոտարական ակտի կոդ: 763-20190826-90-4122043) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05062020-06-0037 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Բուսաբանական փողոց թիվ 3-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 39.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 33.3քմ) ավտոտնակը 101400 (հարյուր մեկ հազար չորս հարյուր) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 39.0քմ մակերեսով հողամասը 176440 (հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Ժորայի Սարուխանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմեն Սարուխանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1318

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1032 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 01/06/2020թ. թիվ Կ-01062020-06-0104 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մայիսի 2020 թվականի թիվ 1032 որոշումը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մայիսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 28/51-1 հասցեում ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակն օրինականացնելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1032 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1319

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2-2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՈՐԱՅՐ ԼԵՆՈՒՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորայր Լենուշի Հովհաննիսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09062020-06-0029 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 2-2/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09062020-06-0029 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Նորայր Լենուշի Հովհաննիսյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նորայր Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 18 (տասնութ) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1320

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 23/4 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԲԱՆԻԿ ՓԱՅԼԱԿԻ ԴԱՎՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալբանիկ Փայլակի Դավոյանի (ծնված՝ 21.03.1951թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Բաժանորդի էպիկրիզը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի կողմից 15.01.2020թ. տրված թիվ 01 տեղեկանքը, 06.02.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-17/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց, թիվ 23/4 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.60քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.60քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1989թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ալբանիկ Փայլակի Դավոյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց, թիվ 23/4 (պայմանական) հասցեում կառուցված իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.60քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց, թիվ 23/4 (պայմանական) հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զոր. Անդրանիկ փողոց, թիվ 23/4-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1321

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 44-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲԻ ՉԱՄՐՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Հակոբի Չամրչյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05042019-06-0033 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով ***որոշում եմ.***

1.Տարանջատել Վանաձոր քաղաքի Տավրոս 4-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 44-2 հասցեում գտնվող, Արմեն Հակոբի Չամրչյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հողամասերի հատակագծերի:
2. Վանաձոր քաղաքի Տավրոս 4-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 44-2 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.
ա) 0.014հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 44-2/1 հողամաս (հատակագիծ թիվ 1).
բ) 0.007հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 44-2 հողամաս (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1322

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆՅՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1-28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Փոխել Վանաձոր քաղաքի Բանյոյի փողոցի թիվ 1-28 հասցեում գտնվող 0.0025հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2.Փոխել Վանաձոր քաղաքի Բանյոյի փողոցի թիվ 1-28 հասցեում գտնվող 23.6քմ մակերեսով ավտոտնակի գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություն՝ ավտոտնակ:

3.Հաստատել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Բանյոյի փողոց, թիվ 1-28 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1323

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ «ՆԵՎԹՈԲԱԶԱՅԻ» ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Փոխել Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի «Նևթոբազայի» հյուսիսային մասում գտնվող 0,06հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2/2-3/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1324

## ՔՆԱՐԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՔԱՐԻՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ՝ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1156 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնարիկ Գառնիկի Քարիմյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600829 վկայականը, 30.04.2020թ. «Նարեկ» համատիրության կողմից հաստատված Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի համաձայնության վերաբերյալ դիմումը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 14.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-72/20 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 16/06/2020թ. թիվ Կ-16062020-06-0159 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով և 42-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Քնարիկ Գառնիկի Քարիմյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի ծավալում կատարված ինքնակամ կառույցը՝ 32.48քմ մակերեսով բաց պատշգամբը և բնակարանում կատարված թվով 2 ինքնակամ ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 32.48քմ մակերեսով ինքնակամ կատարված կառույցի՝ բաց պատշգամբի օրինականացման համար սահմանված վճարը՝ 136420 (հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր քսան) դրամ և թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 4200 (չորս հազար երկու հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 80 շենք թիվ 24 բնակարան:

4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 08 հունիսի 2020 թվականի «Քնարիկ Գառնիկի Քարիմյանի կողմից Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի ծավալից դուրս՝ թիվ 24 բնակարանին կից ինքնակամ իրականացված կառույցը՝ բաց պատշգամբը, բնակարանում կատարված ինքնակամ ձևափոխումներն օրինականացնելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 1156 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիս 02
Ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1325

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 82/2-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԵՆ ՄՀԵՐԻ ՍԱՂՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Մհերի Սաղյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12062020-06-0046 և Արմեն Մհերի Սաղյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26042019-06-0053 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց թիվ 82/2-3 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 114.7քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12062020-06-0046 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 337220 (երեք հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Մհերի Սաղյանին՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմեն Մհերի Սաղյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 114.7քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
Ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1326

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ ԹԱՂԱՄԱՍ) 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհարիկ Հարությունի Համբարձումյանի (ծնված՝ 28.05.1953թ.) լիազորված անձ Լիլիթ Սպարտակի Ղուկասյանի (ծնված՝ 20.08.1982թ.) դիմումը, 05.05.2020թ.-ին տրված թիվ 23 ԱՎ 0416747 (նոտարական ակտի կոդ: 775-20200508-64-4546038) լիազորագիրը, անհատական բնակելի տան 04.06.1988թ. տրված տեխնիկական անձնագիրը, 11.11.2009թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4873 վկայագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-82/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, եզրակացությունը,հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղամաս) 10-րդ փողոց թիվ 34 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 316.0քմ և դրան կից 300.0քմ ու այն գերազանցող 557.60քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1974-1990թ.թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1173.60քմ:
Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Գոհարիկ Հարությունի Համբարձումյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղամաս) 10-րդ փողոց թիվ 34 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 316.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 300.0քմ

հողամասը գերազանցող 557.60քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Գոհարիկ Հարությունի Համբարձումյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 1067250 (մեկ միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) դրամով:
2. Ճանաչել Գոհարիկ Հարությունի Համբարձումյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղամաս) 10-րդ փողոց թիվ 34 հասցեի 1173.60քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գոհարիկ Համբարձումյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 557.60քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հաստատել Վանաձոր քաղաքի Ժդանով թաղամաս 10-րդ փողոց թիվ 34 հասցեում գտնվող գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 10-րդ փողոց, թիվ 34 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1327

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱՅԻ ԹԻՎ 34 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ 34/3-1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻՆ ԿԻՑ ԼԵՈՆԻԴ ՍԱՄՎԵԼԻ ԱՍԼՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեոնիդ Սամվելի Ասլոյանի լիազորված անձ Էդգար Գուրգենի Հակոբյանի դիմումը, 25.11.2019թ. թիվ 4188 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20191125-90-4327763), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15052020-06-0027 վկայականը, 15.11.2019թ. տրված անվան փոխման մասին թիվ ԲԱ189281 պետական վկայականը, 20.11.2019թ. «Կենտրոն» համատիրության կողմից տրված որոշումը, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 34 շենքի առաջին շքամուտքի բնակիչների կողմից տրված համաձայնությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի գ) ենթակետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով և 42-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Լեոնիդ Սամվելի Ասլոյանի կողմից ինքնակամ կատարած, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին և առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 34 շենքի ծավալում գտնվող 34/3-1 տնտեսական սենյակին կից 1.1քմ մակերեսով շինությունը՝ տնտեսական սենյակը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1.1քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինության՝ տնտեսական սենյակի օրինականացման համար սահմանված վճարը՝ 5720 (հինգ հազար յոթ հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 34 շենք, 3-2 տնտեսական սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
Ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 1328

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍ 22 ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 29/06/2020թ. թիվ Կ-29062020-06-0113 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

Փոխել Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս 22 փողոց թիվ 7 հասցեում գտնվող 0,03608հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 02
Ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հուլիսի 2020 թվականի N 1329

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1Ա-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՍԵՐՊԱՆՏԻՆ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սերպանտին» արտադրական կոոպերատիվի նախագահ Ալվիդա Մադոյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2230677 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.06.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-93/ 20 Ի եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2006թ. թիվ 718-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Հաստատել Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց թիվ $1^{\text{Ա-2}}$ հասցեում գտնվող 0.1029հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ բնակավայրերի հողերից՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության և արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողեր:

2.Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց թիվ $1^{\text{Ա-2}}$ հասցեում «Սերպանտին» արտադրական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 322.08քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 276.28քմ) արտադրական նշանակության շինությունները՝ համաձայն հատակագծի:

3.«Սերպանտին» արտադրական կոոպերատիվի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 322.08քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների համար 821310 (ութ հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասը) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 1/1-4 արտադրամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 03
Ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
## ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2020 թվականի N 1330

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՇԱԿ ԽԱՆԱԳԱՆՅԱՆ ԲԱԳՐԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ անհատ ձեռնարկատեր Արշակ Խանագանյան Բագրատի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 10.06.2020 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ ԱՁ Արշակ Խանագանյան Բագրատին 2020 թվականին իրականացրել է առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հունիսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով՝ Վանաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հունիսի 29-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Վարչական վարույթի լսումներին ԱՁ Արշակ Խանագանյան Բագրատին չի ներկայացել, իսկ 12.06.2020 թվականին ուղարկված ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա չէ:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կանեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ անհատ ձեռնարկատեր Արշակ Խանագանյան Բագրատի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հուլիսի 2020 թվականի N 1331

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ՏԱՎՐՈՍԻ) ՓՈՂ. ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԳԵՅ ԽԱՉԻԿԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերգեյ Խաչիկի Մեհրաբյանի (ծնված՝ 12.04.1953թ.) դիմումը, 12.01.1993թ. տրված տեխնիկական անձնագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-74/20 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մանուշյան (նախկին Տավրոսի) փող. թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 290.0քմ և կից 300.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1977թ.-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 590.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1.Ճանաչել Սերգեյ Խաչիկի Մեհրաբյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մանուշյան (նախկին Տավրոսի) փող. թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 290.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Սերգեյ Խաչիկի Մեհրաբյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մանուշյան (նախկին Տավրոսի) փող. թիվ 5 հասցեի 590.0 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մանուշյան փողոց, թիվ 3/1-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հուլիսի 2020 թվականի N 1332

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19-38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐՄԵՆ ԱՐՏԵՄԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարմեն Արտեմի Մինասյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0031 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1739909 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 19-38 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.0քմ մակերեսով հողամասը, նախապատվության իրավունքով, հողի կադաստրային արժեքով՝ 38280 (երեսունութ հազար երկու հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Կարմեն Արտեմի Մինասյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Կարմեն Արտեմի Մինասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հուլիսի 03
ք.Վանաձոր